

ԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ՄԵՁ ԱՄԲԱՐԱԾ
ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՊՐՈՖԵՍՈՐԸ
(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մորուս Հասրաթյանի
ծննդյան 115-ամյակի առթիվ)*

*Մորուս Հասրաթյանի անունը մեր տանը տրվում էր հատուկ սիրով.
մայրս և հայրս նրա մասին խոսում էին որպես ազգային արժեքի: Ես*



նրան առաջին անգամ տեսել եմ 1959 թ. սեպտեմբերի 1-ին, երբ Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ պատմալեզվագրական ֆակուլտետի առաջին կուրս մտավ եվրոպական արտաքինով, խիստ համակրելի պրոֆեսորը՝ Մ. Հասրաթյանը, ծանոթանալու նոր ընդունված ուսանողների հետ և վարելու առաջին զրույցը: Այս հանդիպումն արդեն բավական էր, որ ոչ միայն ես, այլև մյուս ուսանողները հատուկ կապվածության զգացմունք ունենային այդ ազնվական պրոֆեսորի նկատմամբ:

Հետո նա ինձ դասավանդեց երկու առարկա՝ հին աշխարհի պատմություն, ապա համաշխարհային արվեստի պատմություն: Այս առարկաների դասախոսություններն ամենասպասվածն էին, և ուսանողները կլանված լսում էին մի դասախոսի, որը չափազանց մեծ մղում ուներ, որ ապագա հայ ուսուցիչը չլինի սահմանափակ և գիտակցի, որ պարտավոր է սովորել ողջ կյանքում, որովհետև գիտելիքի սահմանն անսահման է:

Հետագայում, երբ ասպիրանտուրայում էի և երջանկություն ունեի այցելելու այդ եզակի մտածողին, Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն աշխատելու տարիներին, ինձ համար առավել պարզ դարձավ, թե ինչ դպրոց էր նա անցել: Նրա բնատուր օժտվածությունն առավել նպատակասլացություն էր ստացել, երբ սովորել էր Լենինգրադում որպես ասպիրանտ և նրա գիտական դեկավարն էր եղել Հովսեփ Օրբելին: Նա հանդիպել էր ու շփվել հայասեր և հայազետ Նիկոդայոս Մառի հետ, որի աշխատություններն այսօր էլ հիացմունք են

պատճառում գիտական հիմնավորվածությամբ ու բազմաթիվ զարմանահրաշ գյուտերով:

Երիտասարդ Մ. Հասրաթյանն իր մեջ ներառել էր այդ երկու հսկա գիտնականների գիտական ու քաղաքացիական լավագույն գծերը և դարձել նրանց գործի շարունակողը թե՛ գիտության բնագավառում և թե՛ մանկավարժական աշխատանքում:

Եթե առաջ ծնողներս էին խոսում Մ. Հասրաթյանի մասին, ապա արդեն ես էի խոսում ու քույրս, որ ինձնից ութ տարով փոքր էր և հիացել էր Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքով, գյուտ արածի նման ասաց, որ հնագետի կերպարը Մ. Հասրաթյանին է պատկերում: Եվ դա ճշմարտություն էր, որովհետև հիանալի ճանաչելով կյանքն իր մեծ ու փոքր խնդիրներով, Մ. Հասրաթյանը միշտ մնաց մեծ ու վեհ գործերի ոլորտներում և երբեք չիջավ սովորական մարդկանց մակարդակին: Հենց այդ է պատճառը, որ նա արժանապատիվ ձևով տարավ ստալինյան բռնատիրության օրերի մի քանի տարվա բանտարկությունը, գրեթե հասավ մահվան դուռը, բայց չդավաճանեց ոչ մեկին: Մակայն կատարվեց հրաշք, նա կարողացավ հաղթահարել ֆիզիկական անկարողությունը և հանուն գիտության ու մանկավարժության հարստացրեց հայագիտությունը և պատրաստեց այդ գործի նվիրյալներ:

Հիմա՝ տարիների հեռվից, երբ վերլուծում եմ Մ. Հասրաթյան գիտնականին, պրոֆեսորին ու մարդուն, հասկանում եմ, որ նա իր մեջ ամբարել էր հին աշխարհի իմաստունների լավագույն գծերը և հատկապես ինչ-որ տեղ հիշեցնում էր Հռոմի նշանավոր կայսր Մարկոս Ավրելիոսին, որի աշխատությունները բարոյական դասեր են բոլոր դարերի ու բոլոր ազգերի համար:

Մ. Հասրաթյանը խոսքի ու գործի միասնությամբ ապրող անհատականություն էր: Նրա համար Հայաստանը և հայրենասիրությունն առաջնահերթ հասկացություններ էին:

Երբ տարիներ անց ես շրջում էի աշխարհի տարբեր թանգարաններում և տեսնում այն ցուցանմուշները, որոնց մասին Մ. Հասրաթյանը մեզ դասավանդել էր, կարծես թե Լուվրում լսում էի նրա ձայնը, երբ տեսնում էի Համուրաբիի առաջին օրենսգիրքը կամ դիտում Նիֆերտիտի կիսանդրին, որի մասին նա ասում էր, թե այդ քանդակը սիրող կնոջ դեմք ունի:

Մ. Հասրաթյանը հատկապես մանրամասն խոսում էր հայկական եկեղեցաշինության մասին, նկարագրում էր Անիի Մայր տաճարը, բացատրում այդ տաճարի ճարտարապետական կատարելությունը,

պատմում, թե նրա կրկնօրինակը կա Գյումրիում, և վերջինս կառուցող վարպետը լույսը բացվելուն պես ոտքով գնացել է Անի ու հետո եկել և կրկնօրինակել տաճարը: Հետո մեզ տեղեկացնում էր, թե նշանավոր բյուզանդագետ Շարլ Դիլն ապացուցել է, որ հայկական ճարտարապետությունն ազդել է եվրոպական եկեղեցաշինության վրա:

Հայրենասիրական իր կեցվածքով Մ. Հասրաթյանը նման էր Մովսես Խորենացուն և Խաչատուր Աբովյանին, որոնց համար ազգային սնապարծությունը հավասար էր աղքատիմացության:

Մ. Հասրաթյանը ուսանողի մեջ ներարկում էր ազգային հպարտության զգացմունքը, որը երբեմն այնքան պակասում է մեզանում:

Մ. Հասրաթյանը առաջնակարգ բանասեր-գրականագետ էր, հնագետ-պատմաբան, հայագետ: Այդ վկայում են նրա գիտական հետազոտությունները նշված բնագավառներում:

1963 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն մեծ շուքով նշեց Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը և հանդիսությունների ծրագրում լույս տեսավ Սայաթ-Նովայի եռալեզու խաղերի ժողովածուն Մորուս Հասրաթյանի առաջաբանով, ծանոթագրություններով ու հիանալի բառարանով:

Մ. Հասրաթյանն այնպես է թիֆլիսահայ բարբառով թարգմանել վրացերեն և թուրքերեն խաղերը, որ թվում է, թե դրանք հենց հայերեն են գրված: Ժողովածուի “Հավելվածում” նա զետեղել է մասամբ գրականացված չորս հայերեն խաղեր՝ մեկը խոհական, երեքը՝ սիրային: Ներկայացնում եմ ամեն մի խաղից մեկ տուն, բանասերի և թարգմանչի վարպետությունը ներկայացնելու համար.

Շատ տխուր սիրտս կխնդացնես, կկտրես հիվանդի դողն,
Երբ քաղցր ձայնդ վեր հանես, կբացվի հետդ խաղցողն,
Խալխից միայն էսքանն ուզի՝ ասեն “ապրի քու ածողն”,
Քանի ողջ է Սայաթ-Նովեն, շատ բան կտեսնես, քամանչա:

Քու սիրուցդ գինով դառա, ես արթուն եմ, սիրտս է քնած,
Աշխարհն աշխարհով կշտացավ, իմ սիրտը քեզնից սով մնաց,
Յա ր, էլ ինչո՞վ գովքդ անեմ՝ աշխարհումս բան չմնաց,
Ծովից էլած հուր-հրեղեն ռաշխ ու ջեյրան ես ինձ համար:

Մի թե ոչով յար չէ սիրել, էս ի՞նչ արի, էս ի՞նչ բան ա,
Քեզ սիրելուց խենթացել եմ, ման եմ գալի յանա-յանա,

Էս ցավից թող մարդ չքաշի՝ կեսի կեսին չի դիմանա,
Միրտս լորի պես խորվեցիր, սիրույդ կրակով, աչքի լույս:

Գարունքվա վախտը լցվել է, երանի ձեզ, ծա՛ղկած վարեր,
Թե բլբուլին բա՛ղն էք դրկել, մանուշակով լի քն սարեր,
Բա՛ հնչի՞ ձայնը չի գալիս, սա՛ լբի-չինար, էդ ի՞նչ արիր,
Ճյուղդ բլբուլին սպանեց՝ կարմիր վարդը խարին մնաց՝:

1997 թ. Օբսֆորդի համալսարանի պրոֆեսոր Չարլզ Դաուլերը հրատարակեց 550 էջանոց ծավալուն հետազոտություն՝ նվիրված Մայաթ-Նովայի կյանքին ու ստեղծագործությանը՝ «Մայաթ-Նովա, 18-րդ դարի աշուղ» խորագրով (*Sayat-Nova, An 18th sentury troubadour*): Այս գրքում առկա է սայաթնովագիտության ողջ ճանապարհը և հաճելի է տեսնել, որ նրանում բազում հղումներ կան Մ. Հասրաթյանի կատարածին ու կարծիքներին:

Մ. Հասրաթյանի պատմահնագիտական հետազոտությունները հրատարակվել են նրա մահվանից հետո՝ 1) «Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ», Երևան, 1985, 2) Հոդվածների ժողովածու, Երևան, 1995:

Այդ գրքերում կան նրա հնագիտական պեղումների արդյունքները, որոնք սփռված են եղել ներկայիս Հայաստանի տարբեր շրջաններում: Նա հիանալի ուսումնասիրություն է գրել Էրեբունի-Երևանի 2750-ամյակի տոնակատարությունների առիթով, որում կարդում ենք. «Ուստի, վերապահություն չի պահանջվում ընդունելու համար, որ Էրեբունի-Երևանի առաջին և մշտական բնակիչները 2750 տարի անընդմեջ եղել են հայերը: Այս էլ Երևանի մյուս տարբերությունն է շեն մնացած հին քաղաքների մի մասից (ինչպես Աթենք, Հռոմ և այլ քաղաքներ), որ շուրջ երեք հազարամյակ միննույն լեզվով են խոսել նրա բնակիչները: Այսինքն՝ ժամանակի ընթացքում բնավ չի փոխվել Երևան քաղաքի էթնիկական կազմը, որը եզակի երևույթ է հատկապես Առաջավոր Ասիայում»²:

¹ Մայաթ-Նովա. Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյան, Երևան, 1963, էջ 274-275:

² Մ. Հասրաթյան. Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 12-13:

Մ. Հասրաթյանը ուշագրավ ու եզակի փաստարկումներով հետազոտություններ է նվիրել Մեսրոպ Մաշտոցին, Վարդան Մամիկոնյանին, Մովսես Խորենացուն, Սյունիքի հնավայրերի պեղումներին, Օշական ու Աղավնատուն գյուղերի մերձակայքում գտնվող հնավայրերին, Ծիծեռնավանքին ու բազմապիսի այլ խնդիրների:

Մ. Հասրաթյանն իր գիտական վաստակի համար 1968-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: 1961-ից նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: Նա վարել է մի շարք կարևոր գիտական հիմնարկների տնօրենի պաշտոններ: Դրանց թվում էր Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենի պաշտոնը 1937-ից, որտեղ էլ նրան ձերբակալել են որպես հակասովետական անձ:

Մ. Հասրաթյանը կյանքում և գիտության մեջ խիստ սկզբունքային էր. նրա համար մեծագույն ու անանց վիշտ էր 1915 թ. երիտթուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանությունը, որը ներելը և մոռանալը համարում էր ազգադավություն: Տանել չէր կարողանում գիտության բնագավառում գիտնական ձևացող ոչ օժտված ու ինքնուրույնություն չունեցող մասնագետներին, որոնց երբեմն մերկացնում էր հրապարակային ու համարձակ ձևով և ոչ ուրիշի անունով ու ձեռքով:

Զարմանալի է, բայց նա երբեք “անբավարար” չէր նշանակում թույլ ուսանողներին, ու երբ մի անգամ հետաքրքրվեցի, թե ինչու է այդպես վարվում, բացատրեց, թե ուսանողը կզրկվի թոշակից, իսկ որոշ ուսանողներ խորհրդային տարիներին ապրում էին ուսանողական թոշակի համեստ հնարավորություններով:

Մ. Հասրաթյանը շատ-շատերին է օգնել, երբ տեսել է օժտված ուսանող է և կարող է գիտության մեջ հմուտ լինել: Նրա երազանքն էր Հայաստանը տեսնել բարեկեցության մեջ, իսկ երիտասարդ սերնդին կրթված ու ազգային գիտակցությամբ զինված: